



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 82 -Ն

«03» հուլիսի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ
ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՀԱՆՐԱՀԱՇԻՎ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻՋԻ
ՏԱՐՐԵՐ» ԵՎ «ԵՐԿՐԱԶՉԱՓՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանում խորացված ուսուցման համար «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

7/3/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169



Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հուլիսի 3-ի

N 82-Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 11-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՀԱՆՐԱՀԱՇԻՎ ԵՎ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ՏԱՐԻԵՐ» ԵՎ «ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

Չանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր
11-րդ դասարան (խորագված)

Թեմա 1	
Աստիճանային և ցուցչային ֆունկցիաներ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> Ֆունկցիայի և նրա հատկությունների մասին գիտելիքների ընդլայնումը: Բնական ցուցիչով աստիճանային, $f(x) = x^{1/n}$, ցուցչային ֆունկցիաների և դրանց հատկությունների հետազոտումը: Աստիճանային և ցուցչային հավասարումների և անհավասարումների լուծման հմտությունների ձևավորումն ու զարգացումը: 	
Վերջնարդյունքները	
ՄՅ11Ի. ՄՄՖ. Ֆ. 11	Իմանա և կիրառի $y=x^n$, $y=x^{1/n}$, $n \in \mathbb{N}$, $y=a^x$ ֆունկցիաների հատկությունները (որոշման և արժեքների տիրույթներ, սահմանափակություն, զրոներ, զույգություն, պարբերականություն, մոնոտոնություն, նշանապահականում, էքստրեմումներ, մեծագույն և փոքրագույն արժեքներ):
ՄՅ11Ի. ՄՄՖ. Ֆ. 12	Կառուցի $y=x^n$, $y=x^{1/n}$, $n \in \mathbb{N}$, $y=a^x$ ֆունկցիաների գրաֆիկները:
ՄՅ11Ի. ՄՄՖ. Ֆ. 13	Կառուցի (ևսև դիսամիկ մաթեմատիկայի ծրագրերով) տրված աստիճանային, ցուցչային ֆունկցիաների գրաֆիկները, թվարկի հատկությունները:
ՄՅ11Ի. ՄՄՖ. Հս. 3	Լուծի ցուցչային հավասարումներ:
ՄՅ11Ի. ՄՄՖ. Ահս. 1	Լուծի ցուցչային անհավասարումներ:
Բովանդակությունը	
<ol style="list-style-type: none"> Աստիճանային ֆունկցիա $f(x) = x^{1/n}$ ֆունկցիան և նրա հատկությունները Ցուցչային ֆունկցիա 	

<p>4. Ցուցչային հավասարումներ 5. Ցուցչային անհավասարումներ</p>
Միջառարկայական կապեր
Չայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:
Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ
Մ3, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ29

Թեմա 2	
Լոգարիթմական ֆունկցիա	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> Ֆունկցիայի և նրա հատկությունների մասին գիտելիքների ընդլայնումը: Թվի լոգարիթմի, լոգարիթմական ֆունկցիայի հատկությունների կիրառման հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Լոգարիթմական հավասարումների ու անհավասարումների լուծման հմտությունների ձևավորումն ու զարգացումը: 	
Վերջնարդյունքները	
ՄՅ11Խ. ԹԹՅ. ԹՅԱԳ. 1 1	Սահմանի թվի լոգարիթմը, ապացուցի և կիրառի հիմնական հատկությունները:
ՄՅ11Խ. ԹԹՅ. ԹՅԱԳ. 1 2	Ձևափոխի ցուցչային և լոգարիթմական արտահայտություններ, հաշվի դրանց արժեքները:
ՄՅ11Խ. ՄՄՖ. Ֆ. 11	Իմանա և կիրառի լոգարիթմական ֆունկցիաների հատկությունները (որոշման և արժեքների տիրույթներ, սահմանափակություն, զրոներ, զույգություն, պարբերականություն, մոնոտոնություն, նշանապահականում, էքստրեմումներ, մեծագույն և փոքրագույն արժեքներ):

ՄՅ11ԻԽ. ՄՄՖ. Ֆ. 13	Կառուցի (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով) տրված լոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկը, թվարկի հատկությունները:
ՄՅ11ԻԽ. ՄՄՖ. Հս. 4	Լուծի լոգարիթմական հավասարումներ:
ՄՅ11ԻԽ. ՄՄՖ. Ահս. 2	Լուծի լոգարիթմական անհավասարումներ:
ՄՅ11ԻԽ. ԹԹՀ. ԹՀ. 2	Համեմատի ցուցչային, լոգարիթմական արտահայտությունների արժեքները:
ՄՅ11ԻԽ. ՄՄՖ. ՏԽ. 2	Կայացնի պարտքերի կառավարման հետ կապված արդյունավետ որոշումներ:
ՄՅ11ԻԽ. ՄՄՖ. ՏԽ. 3	Կայացնի ինսյուրությունների և ներդրումների հետ կապված արդյունավետ որոշումներ:
Բովանդակությունը	
<ol style="list-style-type: none"> 1. Լոգարիթմի սահմանումը 2. Լոգարիթմի հիմնական հատկությունները 3. Լոգարիթմական ֆունկցիա 4. Լոգարիթմական հավասարումներ 5. Լոգարիթմական անհավասարումներ 	
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:	
Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ	
Մ3, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ19, Մ24, Մ25, Մ26, Մ29	

Թեմա 3
Թվային հաջորդականություն, սահման

Նպատակը	
1. Հաջորդականության սահման հասկացության ներմուծումը: 2. Հաջորդականության սահման հաշվելու հմտությունների ձևավորումը:	
Վերջնարդյունքները	
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 1	Սահմանի թվային հաջորդականություն հասկացությունը, գրի տրված հաջորդականությունը n-րդ անդամի և ռեկուրենտ բանաձևերով:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 2	Որոշի տրված թվային հաջորդականության մոնոտոնությունը, սահմանափակությունը:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 3	Գաղափար ունենա հաջորդականության սահման հասկացության մասին, բերի զուգամետ և տարամետ հաջորդականությունների օրինակներ:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 4	Հաշվի հաջորդականության սահմանը պարզ դեպքերում:
Բովանդակությունը	
1. Թվային հաջորդականություն 2. Հաջորդականության սահման, զուգամետ/ոչ զուգամետ հաջորդականություններ 3. Սահմանների հաշվման օրինակներ <ol style="list-style-type: none"> 1) e թիվը 2) Անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարի բանաձև, պարբերական կոտորակներ 3) Շրջանագծի երկարությունը և շրջանի մակերեսը 	
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:	
Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ	
Մ3, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ29	

Թեմա 4	
Ֆունկցիայի անընդհատություն: Ածանցյալ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Ֆունկցիայի անընդհատություն, ածանցյալ հասկացությունների ներմուծումը: 2. Ֆունկցիայի ածանցյալի հաշվման և այն կիրառելու հմտությունների ձևավորումը և զարգացումը: 	
Վերջնարդյունքները	
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 5	Գաղափար ունենա ֆունկցիայի անընդհատության մասին: Իմանա, որ բոլոր տարրական ֆունկցիաները անընդհատ են:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 6	Սահմանի ֆունկցիայի ածանցյալ հասկացությունը: Մեկնաբանի երկրաչափական և ֆիզիկական իմաստները:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 7	Իմանա և կիրառի ածանցման կանոնները, տարրական ֆունկցիաների ածանցյալները:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 8	Հաշվի բարդ ֆունկցիայի ածանցյալը:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 9	Գրի տրված կետում ֆունկցիայի գրաֆիկին տարված շոշափողի հավասարումը, կիրառի խնդիրներ լուծելիս:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 10	Հետազոտի տրված ֆունկցիան ածանցյալի միջոցով և կառուցի գրաֆիկը:
ՄՅ11Ի. ՄՄՖ. ՄԱՏ. 11	Լուծի խնդիրներ ածանցյալի կիրառմամբ:
Բովանդակությունը	
<ol style="list-style-type: none"> 1. Ֆունկցիայի անընդհատությունը 2. Տարրական ֆունկցիաների անընդհատությունը 3. Ակնթարթային արագություն և արագացում 4. Ածանցյալ 5. Երկու ֆունկցիաների գումարի և արտադրյալի ածանցման կանոնները 6. Երկու ֆունկցիաների քանորդի ածանցման կանոնը 7. Բարդ ֆունկցիայի ածանցյալը 8. Տարրական ֆունկցիաների ածանցյալները 	

<p>9. Ֆունկցիայի գրաֆիկի շոշափող</p> <p>10. Ֆունկցիայի մոնոտոնության միջակայքեր: Կրիտիկական կետեր</p> <p>11. Ֆունկցիայի էքստրեմումները</p> <p>12. Ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները</p> <p>13. Ֆունկցիայի հետազոտումը ածանցյալի միջոցով: Գրաֆիկի կառուցում</p> <p>14. Օպտիմիզացիայի խնդիրներ</p> <p>15. Երկրորդ կարգի ածանցյալ</p>
Միջառարկայական կապեր
Չայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:
Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ
Մ3, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ29

Թեմա 5	
Պայմանական հավանականություն: Նորմալ բաշխում	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Պայմանական հավանականություն, անընդհատ պատահական մեծություն, նորմալ բաշխում հասկացությունների ներմուծումը, դրանց դերի և նշանակության բացահայտումը: 2. Պայմանական հավանականության, անընդհատ պատահական մեծության, նորմալ բաշխման վերաբերյալ խնդիրների լուծման հմտությունների ձևավորումը: 	
Վերջնարդյունքները	
ՄՅ11Խ. ՏՎՄ. ՅՏ. 1	Լուծի խնդիրներ պայմանական հավանականության կիրառմամբ:
ՄՅ11Խ. ՏՎՄ. Վ. 4	Գաղափար ունենա նորմալ բաշխման մասին և լուծի խնդիրներ:
Բովանդակությունը	
1. Պայմանական հավանականություն	

2. Անընդհատ պատահական մեծություններ
3. Նորմալ բաշխում: Ստանդարտացում
4. Նորմալ բաշխումով մոդելավորում

Միջառարկայական կապեր

Չայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:

Կապը հանրակրթության պետական չափորոշիչի վերջնադրույունքների հետ

Մ3, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ29

Երկրաչափություն
11-րդ դասարան (խորագված)

Թեմա 1	
Գլան, կոն, գունդ	
Նպատակը	
1. Պտտական մարմինների և դրանց տարրերի հասկացությունների ներմուծումը, դրանց հետ կապված օրինաչափությունները խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունների ձևավորումն ու զարգացումը: 2. Տարածական պատկերացումների խորացումն ու զարգացումը:	
Վերջնարդյունքները	
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 23	Սահմանի գլանային մակերևույթ, գլան, գլանի ծնորդ, կողմնային մակերևույթ, առանցքային հատույթ հասկացությունները: Պատկերի գլան, գլանային մակերևույթ, առանցքային հատույթ, գլանի փռվածք (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով):
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 24	Ապացուցի գլանի կողմնային մակերևույթի և լրիվ մակերևույթի մակերեսների բանաձևերը և կիրառի դրանք խնդիրներ լուծելիս:
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 23	Սահմանի կոնային մակերևույթ, կոն, հատած կոն, կոնի ծնորդ, կողմնային մակերևույթ, առանցքային հատույթ հասկացությունները: Պատկերի կոն, կոնային մակերևույթ, հատած կոն, առանցքային հատույթ, կոնի փռվածք (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով):
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 24	Ապացուցի կոնի, հատած կոնի կողմնային մակերևույթի և լրիվ մակերևույթի մակերեսների բանաձևերը և կիրառի դրանք խնդիրներ լուծելիս:
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 23	Սահմանի գնդային մակերևույթ, գունդ հասկացությունները և դրանց տարրերը: Պատկերի գնդային մակերևույթ, գոտի, սեգմենտ, սեկտոր (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով):
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 25	Իմանա և մեկնաբանի գնդի և հարթության փոխադարձ դասավորությունը, շոշափման կետով անցնող շառավղի, շառավղի ծայրակետով անցնող և նրան ուղղահայաց հարթության

	հատկությունները, սահմանի գնդի շոշափող ուղիղ, հարթություն հասկացությունները և կիրառի դրանք խնդիրներ լուծելիս:
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 26	Իմանա գնդային մակերևույթի մակերեսի բանաձևը և կիրառի խնդիրներ լուծելիս:
ՄԵ11Ի. Ե. ՏՃ. 27	Պատկերի (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով) համակցված մարմիններ և լուծի դրանց վերաբերյալ խնդիրներ:
Բովանդակությունը	
<ol style="list-style-type: none"> 1. Գլանային մակերևույթ, գլան 2. Գլանի մակերևույթի փռվածքը, կողմնային և լրիվ մակերևույթների մակերեսները 3. Կոնային մակերևույթ, կոն 4. Կոնի մակերևույթի փռվածքը, կողմնային և լրիվ մակերևույթների մակերեսները 5. Հատած կոն, դրա տարրերը, առնչություններ հատած կոնի տարրերի միջև, հատած կոնի ստացումը պտտման միջոցով 6. Հատած կոնի մակերևույթի փռվածքը, մակերևույթի մակերեսը 7. Գնդային մակերևույթ և գունդ 8. Գնդային մակերևույթի և հարթության փոխադարձ դասավորությունը: Գնդային մակերևույթի շոշափող ուղիղ և հարթություն, դրանց և շոշափման կետին տարված շառավիղի հատկությունները 9. Գնդի հատումը հարթությամբ 10. Գնդային մակերևույթի մակերեսի բանաձևը 11. Պտտական մարմիններին ներգծյալ և արտագծյալ բազմանիստեր 12. Բազմանիստերի և պտտական մարմինների համակցումով ստացված մարմիններ 	
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:	
Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ	
Մ3, Մ4, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ29	

Վեկտորները և կոորդինատները տարածության մեջ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> Վեկտորների ու կոորդինատների մասին պատկերացումների ընդլայնումը: Եռաչափ վեկտորների հետ գործողություններ անելու, տարածության կետերի կոորդինատներով աշխատելու հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Վեկտորներն ու կոորդինատները խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունների զարգացումը: 	
Վերջնարդյունքները	
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 1	Սահմանի վեկտոր, հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր, համահարթ, տարահարթ վեկտորներ հասկացությունները և կառուցի դրանց օրինակներ (նաև դիսկրետ մաթեմատիկայի ծրագրերով):
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 2	Գտնի վեկտորների գումարը, տարբերությունը, երկու վեկտորների կազմած անկյունը, վեկտորի մոդուլը, վեկտորի ու թվի արտադրյալը, երկու վեկտորների սկայյար արտադրյալը (նաև դրանց կոորդինատներով), վեկտորի պրոյեկցիան տրված ուղղի, հարթության վրա:
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 3	Վերածի վեկտորը՝ ըստ երեք տարահարթ վեկտորների, գտնի վեկտորի կոորդինատները:
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 4	Կիրառի վեկտորները և կոորդինատային մեթոդը երկրաչափական և բնագիտական խնդիրներ լուծելիս:
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 5	Գտնի հատվածի միջնակետի կոորդինատները, հատվածի երկարությունը ծայրակետերի կոորդինատներով:
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 6	Գտնի կոորդինատների սկզբնակետի, առանցքների, հարթությունների նկատմամբ տրված կետի համաչափ կետի կոորդինատները:
ՄԵ11ԻԱ. Ե. ԿՎ. 7	Գրի ուղղի, գնդային մակերևույթի հավասարումները, կիրառի դրանք խնդիրներ լուծելիս:
Բովանդակությունը	
1. Վեկտոր հասկացությունը: Համագիծ և տարագիծ վեկտորներ	

2. Վեկտորների հավասարությունը
3. Վեկտորների գումարումը և հանումը
4. Վեկտորի բազմապատկումը թվով
5. Համահարթ և տարահարթ վեկտորներ, վեկտորների համահարթության հայտանիշը, երեք տարահարթ վեկտորների գումարման զուգահեռանիստի կանոնը
6. Վեկտորի վերածումը՝ ըստ երեք տարահարթ վեկտորների: Վեկտորների կիրառությունը երկրաչափական խնդիրներ լուծելիս
7. Կորորդինատների ուղղանկյուն համակարգը տարածության մեջ
8. Կետի կորորդինատները և վեկտորի կորորդինատները, դրանց կապը
9. Երկու կետերի հեռավորությունը կորորդինատներով, վեկտորի երկարությունը, հատվածի միջնակետի կորորդինատները
10. Կորորդինատային սկզբնակետի, առանցքների և հարթությունների նկատմամբ համաչափ կետերի կորորդինատները
11. Վեկտորների գումարման, հանման, թվով բազմապատկման գործողությունները կորորդինատներով
12. Վեկտորների կազմած անկյունը, վեկտորների սկայյար արտադրյալը
13. Ուղղի, հարթության կանոնական հավասարումները, գնդային մակերևույթի հավասարումը
14. Կորորդինատային մեթոդի կիրառությունը երկրաչափական խնդիրներ լուծելիս
15. Հարթության և տարածության արտապատկերումներ. հարթության վրա զուգահեռ տեղափոխում և պտույտ կետի շուրջը, տարածության մեջ կենտրոնային, առանցքային համաչափություններ, զուգահեռ տեղափոխում և պտույտ առանցքի շուրջը

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:

Կապը հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ

Մ3, Մ4, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ29